



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

«9» սեպտեմբեր 2022 թ.

№ 943-Լ

Հ Ր Ա Մ Ա Ն

**ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱԳՈՅԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅԱՆ
ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 702-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 17-րդ կետի 16-րդ ենթակետով և հիմք ընդունելով ՀՀ հարկային օրենսգրքի 378-րդ հոդվածի 2-րդ մասը և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի հուլիսի 11-ի թիվ 806-Ա որոշմամբ հաստատված միջոցառումների ցանկի 6-րդ կետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել նախնական գնագոյացման պայմանավորվածության ձեռքբերման կարգը և պայմանները՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից:

Հավելված



ԿԱՐԳ

ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱԳՈՅԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Գլուխ 1. Կարգավորման առարկան

1. Սույն կարգով կանոնակարգվում են Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կազմակերպության ոչ ռեզիդենտ փոխկապակցված կողմի (կողմերի) հետ վերահսկվող գործարքներ իրականացնելու դեպքում նախնական գնագոյացման պայմանավորվածության ձեռքբերման կարգը և նախնական գնագոյացման համաձայնագրի կնքման ընթացակարգը և պայմանները:

2. Նախնական գնագոյացման համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր)՝ վերահսկվող գործարքներում տրանսֆերային գնագոյացման մեթոդների կիրառման և այդ գործարքների մասով Համաձայնագրով սահմանված ժամանակահատվածի համար ֆինանսական ցուցանիշի սահմանման կարգի վերաբերյալ հարկ վճարողի և հարկային մարմնի միջև կնքվող պայմանավորվածությունն է: Յուրաքանչյուր կնքվող Համաձայնագիր պետք է կիրառվի միայն Համաձայնագրով սահմանված կողմերի, վերահսկվող գործարք(ներ)ի (այսուհետ՝ Գործարք) և ժամանակահատվածի համար:

3. Նախնական գնագոյացման համաձայնագրի առարկա են հանդիսանում՝

1) ՀՀ հարկային օրենսգրքի 363-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով սահմանված վերահսկվող գործարքները,

2) Տրանսֆերային գնագոյացման փաստաթղթավորումը, մասնավորապես, Գործարքի՝ պարզաձև ձեռքի հեռավորության սկզբունքին համապատասխանությունը որոշելու համար կիրառված տրանսֆերային գնագոյացման մեթոդը, ընտրված ֆինանսական ցուցանիշը և համադրելիության վերլուծությունը,

3) համադրելիության վերլուծություն իրականացնելու նպատակով օգտագործվող տեղեկատվության աղբյուրների ցանկը,

4) Համաձայնագրի գործողության ժամկետը,

5) Համաձայնագրի պայմանների իրագործումը հաստատող փաստաթղթերի ցանկը, ներկայացման կարգը և ժամկետները,

6) այլ պայմաններ:

4. Համաձայնագիրը կնքած ՀՀ ռեզիդենտ կազմակերպությունը կարող է Համաձայնագրի կնքման փաստի մասին տեղեկացնել Գործարքի կողմ հանդիսացող ոչ ռեզիդենտ անձանց:

5. Համաձայնագրի բովանդակությունը հաստատվում է սույն կարգի Ձև 1-ով:

6. Համաձայնագիրը կնքվում է անվճար հիմունքներով:

Գլուխ 1.1. Նախնական գնագոյացման պայմանավորվածության ձեռքբերման առավելությունները

1. Նախնական գնագոյացման պայմանավորվածության ձեռքբերման առավելություններն են՝

1) Հնարավորություն է ընձեռում հարկ վճարողին ձեռքբերելու հստակություն ապագայում իրականացվելիք վերահսկվող գործարքի պարզած ձեռքի հեռավորության սկզբունքին համապատասխանելու հարցում,

2) Ձեռքբերված նախնական գնագոյացման պայմանավորվածության պայմանների պահպանման դեպքում՝ վերահսկվող գործարքի նկատմամբ ռիսկայնության ցածր մակարդակի ապահովում,

3) Վերահսկվող գործարքի հետ կապված հավանական հարկային վեճերի լուծում վաղ փուլում,

Հնարավորություն է ընձեռում երկարաձգելու նախնական գնագոյացման պայմանավորվածությունը, եթե տվյալ վերահսկվող գործարքում էական փոփոխություններ տեղի չեն ունեցել:



ԲԱԺԻՆ 2. ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱԳՈՅԱՑՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ

Գլուխ 2. Նախնական գնագոյացման համաձայնագրի կնքման նպատակով անհրաժեշտ տեղեկատվության ներկայացումը

1. Համաձայնագրի կնքման և համաձայնագիրը պատշաճ կերպով կազմելու նպատակով ՀՀ ռեզիդենտ կազմակերպությունը իր համար նախընտրելի ձևաչափով հարկային մարմնին է ներկայացնում հետևյալ տեղեկատվությունը.

- 1) Հարկ վճարողի անվանումը,
 - 2) ՀՎՀՀ-ն,
 - 3) Անձի տվյալները, ում հետ ձեռք է բերվելու նախնական գնագոյացման պայմանավորվածությունը (անուն, ազգանուն, հեռախոսահամար, էլ. հասցե),
 - 4) Դիմողի էլ. հասցե.
 - 5) Վերահսկվող գործարքի մյուս կողմ հանդիսացող ոչ ռեզիդենտ կազմակերպության անվանումն ու ռեզիդենտության երկիրը,
 - 6) Ռեզիդենտ կազմակերպության և ոչ ռեզիդենտ կազմակերպության փոխկապակցվածությունը,
 - 7) Ռեզիդենտ կազմակերպության դերը վերահսկվող գործարքում,
 - 8) Նախնական գնագոյացման պայմանավորվածություն ձեռքբերելու առաջարկվող ժամանակահատվածը,
 - 9) Վերահսկվող գործարքի նկարագրությունը և արժեքը՝ նախնական գնագոյացման պայմանավորվածություն ձեռքբերելու նպատակով,
 - 10) Ընտրված տրանսֆերային գնագոյացման մեթոդը, ֆինանսական ցուցանիշը, համադրելիները և ակնկալվող պարզած ձեռքի հեռավորության տիրույթը:
2. Հարկային մարմնի իրավասու կառուցվածքային ստորաբաժանումը 20 աշխատանքային օրվա ընթացքում դիմողին տեղեկացնում է նախնական քննարկում կազմակերպելու համար նախընտրելի օրվա և ժամի վերաբերյալ:
3. Նախնական քննարկման արդյունքներով պայմանավորված՝ հարկային մարմինը 10 աշխատանքային օրվա ընթացքում ծանուցում է դիմողին Համաձայնագրի կնքման նպատակահարմարության իր դիրքորոշման վերաբերյալ:

Գլուխ 3. Նախնական գնագոյացման համաձայնագրի կնքման կողմերը

1. Համաձայնագրի կողմ են հանդիսանում ՀՀ ռեզիդենտ կազմակերպությունը և հարկային մարմինը՝ ի դեմս հարկային մարմնի ղեկավարի:

Գլուխ 4. Նախնական գնագոյացման համաձայնագրի կնքման ընթացակարգը

1. Համաձայնագրի կնքման նպատակահարմարության վերաբերյալ հարկային մարմնի կողմից դրական դիրքորոշում ստանալուց հետո՝ երեսուն աշխատանքային օրվա ընթացքում Համաձայնագրի կնքելու նպատակով ՀՀ ռեզիդենտ կազմակերպությունը հարկային մարմին է ներկայացնում սույն կարգի Զև 2-ով սահմանված դիմումը: Դիմումին կից ներկայացվում են նաև հետևյալ փաստաթղթերը, մասնավորապես.

1) Համաձայնագրի նախագիծը,

2) Գործարքին առնչվող ՀՀ ռեզիդենտ կազմակերպության գործունեության մասին փաստաթղթերը, ինչպես նաև տրանսֆերային գնագոյացման փաստաթղթավորումը,

3) ՀՀ ռեզիդենտ կազմակերպության կանոնադրության պատճենը,

4) վերջին հաշվետու ժամանակաշրջանի համար ՀՀ ռեզիդենտ կազմակերպության ֆինանսական հաշվետվությունը,

5) Գործարքին վերաբերելի փաստաթղթեր, որոնք կարող են հիմք հանդիսանալ Համաձայնագրի կնքման համար:

1.1. Սույն կետով սահմանված փաստաթղթերը ներկայացվում են հարկային մարմին էլեկտրոնային եղանակով: Հարկային մարմինն իրավունք ունի պահանջել նաև լրացուցիչ փաստաթղթեր, որոնք ՀՀ ռեզիդենտ կազմակերպությունը ներկայացնում է հարկային մարմին՝ այդ մասին գրավոր ծանուցում ստանալուց հետո տասը աշխատանքային օրվա ընթացքում:

2. Հարկային մարմնի իրավասու կառուցվածքային ստորաբաժանումը ուսումնասիրում է ՀՀ ռեզիդենտ կազմակերպության կողմից ներկայացված դիմումը և կից ներկայացված փաստաթղթերը դրանք ստանալու օրվանից հետո՝ 45 աշխատանքային օրվա ընթացքում, եթե այլ բան նախատեսված չէ սույն կետով: Փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում իրավասու կառուցվածքային ստորաբաժանման կողմից ընդունվում են հետևյալ հնարավոր որոշումները.

1) Համաձայնագիր կնքելու մասին որոշում,

2) Համաձայնագիր չկնքելու մասին հիմնավորված որոշում,

3) Համաձայնագրի նախագիծը լրամշակելու մասին որոշում, որով առաջարկվում է լրամշակել Համաձայնագրի նախագիծը և կրկին դիմել հարկային մարմին՝ ներկայացնելով սույն կարգի Ձև 3-ով հաստատված դիմումը, ինչպես նաև սույն Գլխի 1-ին կետով սահմանված փաստաթղթերը:

3. Համապատասխան որոշում ընդունելուց հետո հարկային մարմինը էլեկտրոնային եղանակով հինգ աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է ՀՀ ռեզիդենտ կազմակերպությանը ընդունված որոշման մասին: Համաձայնագիր կնքելու մասին որոշում ընդունելու դեպքում հարկ վճարողը տեղեկացվում է նաև տվյալ համաձայնագիրը կնքելու վայրի, ամսաթվի և ժամի վերաբերյալ:

3.1. Համաձայնագրի նախագիծը լրամշակելու մասին որոշումը ՀՀ ռեզիդենտ կազմակերպությանը ներկայացնելուց հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում վերջինս ներկայացնում է Համաձայնագրի լրամշակված տարբերակը:

3.2. Համաձայնագրի լրամշակված տարբերակը հարկային մարմնի կողմից ուսումնասիրվում և համապատասխան որոշումն ընդունվում է Համաձայնագրի լրամշակված տարբերակը ստանալուց հետո՝ 20 աշխատանքային օրվա ընթացքում:

4. Համաձայնագիր չկնքելու մասին որոշում կայացնելու հիմքերն են՝ մասնավորապես.

1) սույն Գլխի 1-ին կետով սահմանված փաստաթղթերը չներկայացնելը կամ ոչ ամբողջական փաթեթի ներկայացնելը,

2) ՀՀ ռեզիդենտ կազմակերպության անհամաձայնությունը լրամշակելու Համաձայնագիրը, այդ թվում՝ Համաձայնագրի լրամշակված տարբերակը չներկայացնելը,

3) ՀՀ ռեզիդենտ կազմակերպության կողմից Համաձայնագիր կնքելուց հրաժարվելը, այդ թվում՝ Համաձայնագիրը կնքելու նպատակով հարկային մարմին չներկայանալը:

5. Համաձայնագիր կնքելու մասին դիմումը կարող է հետ կանչվել ՀՀ ռեզիդենտ կազմակերպության կողմից՝ դիմումն ուղարկելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում, եթե դեռևս որևէ որոշում չի կայացվել:

Գլուխ 5. Նախնական գնագոյացման համաձայնագրի գործողության ժամկետը

1. Համաձայնագիրը կարող է կնքվել ոչ ավել քան երեք տարի ժամկետով՝ մեկ կամ մի քանի վերահսկվող գործարքների մասով:

2. Համաձայնագրի բոլոր պայմանների պահպանման դեպքում ՀՀ ռեզիդենտ կազմակերպությունն իրավունք ունի Համաձայնագրի գործողության ժամկետի ավարտից երեք ամիս առաջ դիմել հարկային մարմին՝ Համաձայնագրի գործողության ժամկետը երկարաձգելու նպատակով: Համաձայնագրի ժամկետը կարող է երկարաձգվել կողմերի համաձայնությամբ ոչ ավել քան երկու տարի ժամկետով՝ Համաձայնագրով սահմանված դրույթների համապատասխան:

3. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի 1-ից, եթե այլ բան նախատեսված չէ Համաձայնագրով:

Գլուխ 6. Նախնական գնագոյացման համաձայնագրի պայմանների կատարման նկատմամբ հսկողություն

1. Համաձայնագրի պայմանների կատարման նկատմամբ հսկողությունն իրականացվում է հարկային մարմնի կողմից:

2. Համաձայնագրի պայմանների կատարման նկատմամբ հսկողության շրջանակներում կողմերի կողմից սահմանվում և համաձայնեցվում են այն փաստաթղթերի ցանկը, ձևաչափը և բովանդակությունը, որոնք անհրաժեշտ են Համաձայնագրի պայմանների կատարումը հաստատելու համար, ինչպես նաև Համաձայնագրով սահմանվում են նշված փաստաթղթերը ներկայացնելու ժամանակացույցը:

3. Հարկային մարմին ներկայացվող փաստաթղթերի բովանդակությունը և ժամանակացույցը կարող են տարբերվել՝ ելնելով Համաձայնագրով սահմանված Գործարքի առանձնահատկություններից:

4. ՀՀ ռեզիդենտ կազմակերպության կողմից Համաձայնագրով սահմանված պայմանները չկատարելու դեպքում հարկային մարմնի կողմից արձանագրվում է ՀՀ հարկային օրենսդրության դրույթների խախտում և հարկային մարմնի կողմից իրականացվում է հարկային պարտավորությունների վերահաշվարկ:

5. Համաձայնագրի կնքումը չի ազատում վերահսկվող գործարքների մասին հարկային մարմին ծանուցում ներկայացնելու պահանջից:

Գլուխ 7. Նախնական գնագոյացման համաձայնագրի գործողության դադարեցումը

1. Համաձայնագիրը դադարեցվում է դրա գործողության ժամկետի ավարտվելուն պես, կամ կարող է դադարեցվել մինչ Համաձայնագրի գործողության ժամկետի ավարտը՝ սույն Կարգով սահմանված դեպքերում:

2. Համաձայնագրի գործողության ժամկետը վաղաժամ կարող է դադարեցվել հարկային մարմնի ղեկավարի որոշման հիման վրա այն դեպքում, երբ ՀՀ ռեզիդենտ կազմակերպության կողմից խախտվել է Համաձայնագրով սահմանված պայմանների կատարումը Համաձայնագրի գործողության ժամկետի ընթացքում:

3. Համաձայնագրի գործողության ժամկետը վաղաժամ կարող է դադարեցվել նաև կողմերի համաձայնությամբ կամ դատարանի որոշմամբ:

4. Հարկային մարմնի կողմից Համաձայնագրի դադարեցման մասին որոշումը ներկայացվում է հարկ վճարողին էլեկտրոնային եղանակով՝ որոշումն ընդունելու օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. Համաձայնագրի դադարեցման մասին հարկային մարմնի որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. Լրացուցիչ հարկային պարտավորությունների առաջադրում իրականացվում է այն դեպքում, երբ Համաձայնագրի պայմանագրի դրույթների խախտումը կամ չկատարումը հանգեցնում է շահութահարկով հարկման բազայի նվազեցման կամ հարկային վնասի ավելացման կամ ողյալթի բազայի նվազեցման:

Գլուխ 8. Նախնական գնագոյացման համաձայնագրի պայմանների գաղտնիությունը

1. Համաձայնագրի կնքման պայմանները համարվում են ՀՀ հարկային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին կետի 63-րդ ենթակետով սահմանված հարկային գաղտնիք:

Գլուխ 9. Նախնական գնագոյացման համաձայնագրի պայմանների անփոփոխությունը

1. Համաձայնագրի պայմաններն անփոփոխ են մինչև Համաձայնագրի գործողության ժամկետի ավարտը:

2. Այն դեպքում, երբ ՀՀ հարկային օրենսդրության մեջ կկատարվեն փոփոխություններ, որոնք կազդեն հարկ վճարողի գործունեության վրա, Համաձայնագրի կողմերն իրավունք ունեն վերանայել Համաձայնագրի համապատասխան դրույթները:



Ձև 1. Նախնական գնագոյացման համաձայնագրի բովանդակությունը

Համաձայնագիրը բաղկացած է հետևյալ բաժիններից.

- 1) Բաժին 1. Համաձայնագրի կողմերը
- 2) Բաժին 2. Համաձայնագրի գործողության ժամկետը
- 3) Բաժին 3. Համաձայնագրի առարկա հանդիսացող գործարքները
- 4) Բաժին 4. Ֆինանսական ցուցանիշը և վերջինիս հաշվարկման մեթոդաբանությունը, ֆինանսական ցուցանիշի նկատմամբ կիրառվող տրանսֆերային գնագոյացման մեթոդ(ներ)ը և համադրելիության վերլուծությունը
- 5) Բաժին 5. Լրացուցիչ դրույթներ և հետագայում գործարքի վրա ազդեցություն ունեցող գործոններ, ինչպես նաև չնախատեսված հանգամանքներ (իրավիճակներ)
- 6) Բաժին 6. Համաձայնագրի պայմանների կատարման նկատմամբ հսկողություն
- 7) Բաժին 7. Համաձայնագրի երկարաձգման պայմանները
- 8) Բաժին 8. Համաձայնագրի գործողության դադարեցումը և հետևանքները
- 9) Բաժին 9. Համաձայնագրի պայմանների գաղտնիությունը
- 10) Բաժին 10. Կողմերի վավերապայմանները



Ձև 2. Նախնական գնագոյացման համաձայնագիր կնքելու մասին դիմում

Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի
համալիր հարկային ստուգումների վարչություն

ԴԻՄՈՒՄ

Նախնական գնագոյացման համաձայնագիր կնքելու մասին

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 378-րդ հոդվածի 1-ին կետի
համաձայն՝ _____

(կազմակերպության լրիվ անվանումը, կազմակերպարավական ձևը, ՀՎՀՀ)

խնդրում է ուսումնասիրել նախնական գնագոյացման համաձայնագիր կնքելու մասին սույն
դիմումը:

Դիմումին կից ներկայացվում են Հայաստանի Հանրապետության պետական
եկամուտների կոմիտեի «___» _____ 2022 թվականի «Նախնական գնագոյացման
պայմանավորվածության ձեռքբերման կարգը և պայմանները սահմանելու մասին» թիվ ___
հրամանով հաստատված կարգով պահանջվող փաստաթղթերը:

Տեղեկացնում եմ, որ փաստաթղթերով ներկայացված տեղեկատվությունը
ամբողջական է և հավաստի:

Առդիր՝ ___ էջ:

Դիմող՝ _____

(կազմակերպության տնօրենի պաշտոն, Ա.Ա.Հ.)

(ստորագրություն)

Կ.Տ.

«___» _____ 20__ թ.

Կոնֆակտային անձի տվյալներ՝ _____

(Ա.Ա.Հ., հեռախոս, էլ. փոստ)

Ձև 3. Նախնական գնագոյացման համաձայնագիր կնքելու մասին կրկին ներկայացվող դիմում



ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵ

Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի
համալիր հարկային ստուգումների վարչություն

ԴԻՄՈՒՄ

Նախնական գնագոյացման համաձայնագիր կնքելու մասին

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 378-րդ հոդվածի 1-ին կետի
համաձայն, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի «___»
_____ 20___ թվականի թիվ _____ որոշումը՝

(կազմակերպության լրիվ անվանումը, կազմակերպարավական ձևը, ՀՎՀՀ)

խնդրում է կրկին ուսումնասիրել նախնական գնագոյացման համաձայնագիր կնքելու մասին
սույն դիմումը:

Տեղեկացնում եմ, որ կից ներկայացված համաձայնագրում հաշվի են առնվել ՀՀ
պետական եկամուտների կողմից կատարված բոլոր դիտողությունները և իրականացվել են
համապատասխան փոփոխություններ:

Դիմումին կից ներկայացվում են Հայաստանի Հանրապետության պետական
եկամուտների կոմիտեի «___» _____ 2022 թվականի «Նախնական գնագոյացման
պայմանավորվածության ձեռքբերման կարգը և պայմանները սահմանելու մասին» թիվ _____
հրամանով հաստատված կարգով պահանջվող փաստաթղթերը:

Տեղեկացնում եմ, որ փաստաթղթերով ներկայացված տեղեկատվությունը
ամբողջական է և հավաստի:

Առդիր՝ _____ էջ:

Դիմող՝ _____

(կազմակերպության տնօրենի պաշտոն, Ա.Ա.Հ.)

(ստորագրություն)

Կ.Տ.

«___» _____ 20___ թ.

Կոնտրակտային անձի տվյալներ՝ _____

(Ա.Ա.Հ., հեռախոս, էլ. փոստ)

